

մալական յարձակումներու հետեւանքով կ'ստիպուի թողուլ իր պաշտօնը և ժողովուրդին հետ մեկնիլ Պոլիս. 1923ին Պատրիարքարանէն կը զրկուի Աթէնք իբր Լիսազօր ֆևնիչ, 1924ին ալ տեղւոյն Պատգամաւորական ժողովէն կ'ընտրուի առաջնորդ եւ կ'ստանայ ամենայն Հայոց հայրապետէն վաւերացումի կոնդալը. 1926ին կը շնորհուի արքուժիւն:

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍԷՍԵԱՆ, ՄԱՐՍՈՒԱՆՅԻ.—Մբ. Ծ. 1811ին. միաբան կ'արձանագրուի 1841ին: Չռ. 1847ին, ՓԿԵ. (1850-58), քարոզիչ Մարաշի մէջ 1859ին, կը վերադառնայ Ս. Յակոբի վանքը 1862ին, լսպ. 1863ին, եպս. կը ձեռնադրուի 1863ին. կը հրաժարի լսպ. պաշտօնէն 1869ին, տեսուչ դպրոցներու. 1876ին կը վախճանի. կնիքը 1847:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ.— 1823ին Առ. Ս. Դանիէլի վանուց Կեսարիոյ, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԵՒԴՈՎԻԱՅԻ. (մականունով Շփոթ).—Մբ. Նւ. Աստէրխանի եւ Չմիւռնիոյ (1781?) կը ձեռնադրուի եպս. 1801ին, Նիկոմիդիոյ եւ Պուրսայի առաջնորդ 1816ին. վերջին պաշտօնավարութիւնը եղած է Պոլսի Ս. Հրեշտակապետ եկեղեցին, ուրկէ կը վտարուի. ժամանակ ինչ առս անդ վարանեալ յետոյ փախեալ ի Լիբանան (Դիւան. Գիրք Ժ. էջ 466): 1819ին փոխադրուեցաւ Անտոնեանց Հոռմի վանքը և հոն մեռաւ 1819 Յուլիս 28ին: Հոռովմէականութեան մէջ ալ եպիսկոպոս արքոյ Երուսաղէմի եւ Եփեսոսի տարօրինակ տիտղոսը կը գործածէր: (Ազգայն. էջ 3403): Կարապետ եպս. Ս. Յակոբի Մատենադարանին նըուելրած է Կուռնելիոսի Մեկն. երգոց երգոյն քարգանձառքեան ձեռագիրը:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԷՎՔԷՐԷՅԻ.—Մբ. խորհրդական Ս. Յակոբի վանքին 1791ին, Նւ. Կեսարիոյ 1795ին, դարպասընկալ. 1812ին կը վախճանի՝ իր տապանադիրն է հետեւեալը. «Այս է տապան հանգստեան Ս. Աթոռոյ միաբան Կեսարիոյ Էվքէրէցի Կարապետ հեղահամբոյր արքեպիսկոպոսին որ հանդեաւ ի թվին ՌՄԿԱ. (=1812) Սեպտեմբերի Բ.»:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ՔԷՉԷՃԵԱՆ, ՉԷՅԹՈՒՆՅԻ.— Ծ. 1836ին, եպս. 1883ին, Առ. Չէյթունի. կը տարագրուի (1895-96) Երուսաղէմ և կ'ապաստանի Ս. Յակոբի վանքը, կը վախճանի 1904ին: